



«18» սեպտեմբերի 2009թ.

N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Մեծարգո նախագահ,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 73-րդ և 75-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «ՄՇՏԱԳ ԻՏԱՐԿՈՒՄ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳ) ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Առդիր՝ 3 էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՍՄԱՎՈՐ

Վ. Հովհաննիսյան
Ա. Ռուստամյան
Ա. Շահբազյան
Ա. Մինասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՄՇՏԱԳԻՏԱՐԿՈՒՄ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳ) ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 73-րդ հոդվածի եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Ստեղծել 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների վերաբերյալ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում (այսուհետ՝ եզրակացություն) ներկայացված առաջարկությունների իրացման մշտադիտարկում (մոնիթորինգ) իրականացնող ժամանակավոր հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հանձնաժողովի խնդիրն է ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ տեղեկանք ներկայացնել Ազգային ժողովին և հանրությանը՝ եզրակացությամբ ներկայացված առաջարկությունների իրականացման և առաջընթացի վերաբերյալ: Տեղեկանքի առնչությամբ առարկություններ ունեցող անդամները (այդ թվում՝ խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող) կարող են ներկայացնել հատուկ կարծիք, որը կցվում է տեղեկանքին:

3. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրներն իրականացնելիս իրավունք ունի հարցումներով դիմելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներին՝ եզրակացությամբ ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

4. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են երկուական պատգամավոր Ազգային ժողովի խմբակցություններից, և մեկ՝ դրանց կազմում չընդգրկված պատգամավորներից: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և տեղակալ: Հանձնաժողովի նախագահի կամ տեղակալի թեկնածության առաջադրման և ընտրվելու իրավունքը վերապահվում է ընդդիմադիր խմբակցությանը:

Ձևավորվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովը իր աշխատանքներին մասնակցելու իրավեր է ուղարկում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, այն հասարակական կազմակերպություններին և արտախորհրդարանական քաղաքական ուժերին, որոնց ցանկը որոշում է Հանձնաժողովը: Հանձնաժողովի նիստերին մասնակցում է նրանցից յուրաքանչյուրի մեկական ներկայացուցիչ:

5. Պատգամավորները Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համապատասխան խմբակցության ղեկավարի (քարտուղարի) ներկայացմամբ:
6. Հանձնաժողովի կազմում ընդգրկելու համար խմբակցության կազմում չընդգրկված պատգամավորների թեկնածուներին Ազգային ժողովի նիստում առաջարկում են պատգամավորները: Ընտրված է համարվում այն պատգամավորը, որը բաց քվեարկությամբ ստանում է առավել թվով ձայներ:
7. Ազգային ժողովի աշխատակազմը Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համար սահմանված կարգով ապահովում է Հանձնաժողովի գործունեության համար օրենքով սահմանված անհրաժեշտ պայմաններ:
8. Հանձնաժողովն գործունեության ժամկետ է սահմանվում մինչև եզրակացությամբ ներկայացված բոլոր առաջարկությունների կատարման վերաբերյալ ամբողջական տեղեկանքի ներկայացումը, բայց ոչ ուշ, քան մինչև Հայաստանի Հանրապետության չորրորդ գումարման Ազգային ժողովի աշխատանքների ավարտը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:

ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Որոշման շրջանառության մեջ դնելը նպատակ է հետապնդում կյանքի կոչել 2008 թվականի մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների վերաբերյալ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում (այսուհետ՝ եզրակացություն), որն ըստ էության ՀՀ ԱԺ կողմից հավանության է արժանացել, ներկայացված առաջարկությունները:

Ստեղծվող ժամանակավոր հանձնաժողովը հանարավարություն կունենա իրականացնել եզրակացությամբ ներկայացված առաջարկությունների կատարման ընթացիկ մոնիթորինգը և ՀՀ ԱԺ -ին, ինչպես նաև հանրությանը ներկայացնել լիարժեք տեղեկատվություն: Որոշման ընդունումը բխում է նաև ՀՀ ԱԺ -ի հետևողական լինելու սկզբունքից:

Առաջարկվում է, որպեսզի Հանձնաժողովի աշխատանքների ներգրավման հնարավորությունը ընձեռվի նաև մարդու իրավունքների պաշտպանին, արտախորհրդարարական քաղաքական ուժերի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:

Որոշման նախագիծը կապահովի նաև ՀՀ ԱԺ -ի մասնակցությունը՝ ԵԽԽՎ բանաձևերով ՀՀ-ին առաջարկված բարեփոխումների մի զգալի մասի կատարմանը: